# ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ
# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Արթիկ 8 ապրիլի 2009 թ.

Քաղաքացի Համիկ Միհրանի Խաչատրյանը, (անձնագիր՝ AA 0646248, տրված 028-ի կողմից 22.10.1996թ.) այսուհետ Վարձատու, մի կողմից և ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայությունը, ի դեմս Ծառայության աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի, ում անունից հանդես է գալիս լիազորված անձ, Ծառայության աշխատակազմի Արթիկի սոցիալական ապահովության տարածքային բաժնի գլխավոր մասնագետ Հռիփսիմե Բգնունին (անձնագիր՝ AF0540830, տրված 18.06.2002թ. 028-ի կողմից), այսուհետ Վարձակալ, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## *1. Պայմանագրի առարկան*

1.1 Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել Շիրակի մարզ, ք. Արթիկ, Ազատության թիվ 1/2 հասցեում գտնվող (145.7) ք.մ ոչ բնակելի տարածք՝ (այսուհետ՝ Օբյեկտ), Վարձակալի կանոնադրական խնդիրներից բխող աշխատանքային գործունեության իրականացման համար:

1.2. Սույն պայմանագիրը գործում է 2009թ. հունվարի 1-ից (հինգ) տարի ժամկետով՝ «01» հունվարի 2009թ. մինչև «01» հունվարի 2014թ.:

1.3. Օբյեկտը Համիկ Միհրանի Խաչատրյանի սեփականությունն է, ինչը հաստատվում է 2009թ. մարտի 18-ի թիվ 2535602 սեփականության իրավունքի վկայականով:

1.4. Վարձատուն երաշխավորում է, որ Գույքը վաճառված, գրավ դրված, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ երրորդ անձանց իրավունքներով, վեճի առարկա չէ և արգելանքի տակ չի գտնվում, ինչը հաստատում է նաև Կադաստրի կողմից 25.03.2009թ. տրված թիվ 0027672 միասնական տեղեկանքով:

## *2. Կողմերի իրավունքները և պարտականությունները*

2.1. *Վարձատուն իրավունք ունի՝*

2.1.1. պահանջել Վարձակալից՝ Օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.

2.1.2. Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել մուծելու վարձավճարը.

2.1.3. եթե Վարձակալը Օբյեկտից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամապատասխան, պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները:

2.2. *Վարձատուն պարտավոր է՝*

2.2.1. Օբյեկտը Վարձակալին հանձնել հանձնման-ընդունման ակտով՝ սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից երեք օրացուցային օրվանից ոչ ուշ: Հանձնման-ընդունման ակտն ստորագրում են Վարձատուն և Վարձակալը:

145,7 ք.մ. — 75,0 հ դրամ
× 12
900 հազ. դր/տարի

Նշված ակտը կցվում է պայմանագրին (թիվ 1 հավելված) և դրա անբաժանելի մասն է.

2.2.2. Օբյեկտը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում.

2.2.3. Օբյեկտը Վարձակալին հանձնել դրան վերաբերող փաստաթղթերով (տեխնիկական անձնագիր, որակի հավաստագիր և այլն).

2.2.4. Վարձակալին նախազգուշացնել վարձակալության հանձնվող Օբյեկտի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին.

2.2.5.իր հաշվին կատարել Օբյեկտի հիմնական վերանորոգում

2.2.6. Ոչ ուշ, քան երեք ամիս առաջ, Վարձակալին գրավոր տեղեկացնել Օբյեկտն ազատելու անհրաժեշտության մասին.

2.3. Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1. պահանջել Վարձատուից՝ սույն պայմանագրի 2.2.1. կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել Օբյեկտը.

2.3.2. Վարձատուից պահանջել՝ իրեն տրամադրելու Օբյեկտին վերաբերող փաստաթղթերը.

2.3.3. վարձատուի կողմից հիմնական վերանորոգում չկատարելու դեպքում, իր ընտրությամբ կատարել Օբյեկտի հիմնական վերանորոգում և վարձատուից պահանջել ա) վերանորոգման արժեքը կամ դա հաշվարկել վարձավճարի հաշվին, բ) համապատասխան չափով նվազեցնել վարձավճարը, գ) լուծել պայմանագիրը և հատուցել վնասները

2.4. Վարձակալը պարտավոր է՝

2.4.1. Օբյեկտն օգտագործել պայմանագրի պայմաններին և Օբյեկտի նշանակությանը համապատասխան.

2.4.2. ժամանակին մուծել Օբյեկտն օգտագործելու համար սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված վճարը.

2.4.3. ապահովել Օբյեկտի ինժեներական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը.

2.4.4. վարձակալած Օբյեկտը պահպանել սանիտարական և հակահրդեհային նորմերին, ինչպես նաև բոլոր այն կանոններին և նորմերին համապատասխան, որոնք գործում են Վարձակալի գործունեության ծևերի ու վարձակալած Օբյեկտի նկատմամբ.

2.4.5. Վարձատուի որոշած ժամկետներում ազատել տարածքը՝ կապված Օբյեկտի (կամ դրա մասի) կառուցվածքների վթարային վիճակի, Օբյեկտը հիմնական վերանորոգման ենթարկելու կամ այլ պատճառների հետ.

2.4.6. Վարձատուին անմիջապես տեղեկացնել Օբյեկտի ամեն մի վնասվածքի, վթարի կամ այլ իրադարձության մասին, որը վնաս է հասցրել (կամ սպառնում է հասցնել) Օբյեկտին, և ժամանակին ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները վտանգի կանխարգելման համար, ինչպես նաև Օբյեկտը հետագայում քանդելու կամ վնասելու դեմ.

2.4.7. առանց Վարձատուի գրավոր համաձայնության չկնքել գրավի, ենթավարձակալության պայմանագրեր և չմտնել գործարքների մեջ՝ կապված Օբյեկտի հետ: Առանց համաձայնության նման պայմանագրեր կնքելը կամ նման գործարքներ կատարելը հիմք են պայմանագրի միակողմանիորեն լուծման համար.

2.4.8. ոչ ուշ, քան երեք ամիս առաջ, Վարձատուին գրավոր տեղեկացնել վարձակալված Օբյեկտի սպասվելիք ազատման մասին՝ կապված պայմանագրի ժամկետն ավարտվելու, կամ այն վաղաժամկետ դադարեցնելու հետ.

2.4.9. իր հաշվին կատարել վարձակալած Օբյեկտի էլեկտրաէներգիայի, ջրի, հեռախոսի և այլ կոմունալ սպասարկման ծախսերը:

### *3. Պայմանագրով կատարվող վճարները և հաշվարկները*

3.1. Օբյեկտի ամսական վարձավճարը կազմում է 145.700 (հարյուր քառասունհինգ հազար յոթ հարյուր)դրամ:

3.2. Տվյալ ամսվա վարձավճարը Վարձակալը վճարում է մինչև հաջորդ ամսվա տասնհինգը:

3.2.1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օբյեկտի հիմնական վերանորոգման պարտավորությունը Կողմերի համաձայնությամբ ստանձնել է Վարձակալը՝ սույն պայմանագրի 2.3.3 կետի «ա» և «բ» ենթակետերին համապատասխան վարձավճարը վճարվում է հիմնական վերանորոգումն ավարտելուց հետո՝ համապատասխան չափով նվազեցնելով ամսական վարձավճարը 70.700 (յոթանասուն հազար յոթ հարյուր) դրամի չափով, որը կազմում է ամսական 75.000 (յոթանասունհինգ հազար) դրամ:

3.3. Սույն պայմանագրի գործողության ընթացքում վարձավճարի չափը կարող է փոփոխվել միայն կողմերի գրավոր համաձայնությամբ:

### *4. Կողմերի պատասխանատվությունը*

4.1. Սույն պայմանագրով սահմանված վարձավճարի վճարման և այլ պայմաններ խախտելու դեպքում կողմերի վճարման ենթակա տուժանքը սահմանվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

4.2. Տուժանքի վճարումը կողմերին չի ազատում պայմանագրով նրանց վրա դրված պարտականությունները կատարելուց:

4.3. Եթե Վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Օբյեկտը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե այն ամբողջովին չի մարում Վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

### *5. Վարձակալած օբյեկտի բարելավումները*

5.1. Եթե Վարձակալն իր միջոցների հաշվին կատարել է վարձակալած Օբյեկտից անբաժանելի բարելավումներ՝ առանց Վարձատուի գրավոր համաձայնության, ապա Վարձակալն իրավունք չունի պահանջելու կատարված բարելավումների համար փոխհատուցում:

5.2. Վարձակալած Օբյեկտի ամորտիզացիոն միջոցների հաշվին կատարած, ինչպես բաժանելի, այնպես էլ անբաժանելի բարելավումները համարվում են Վարձատուի սեփականությունը:

### *6. Պայմանագրի վաղաժամկետ լուծումը*

6.1. Վարձատուի պահանջով՝ վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝

6.1.1. Օբյեկտն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ նշանակության խախտումներով.

6.1.2. էականորեն վատթարացրել է Օբյեկտի վիճակը.

6.1.3. սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը.

6.1.4. սույն պայմանագրով սահմանված ժամկետներում չի կատարել Օբյեկտի ընթացիկ վերանորոգումը:

6.2. Վարձակալի պահանջով՝ սույն պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե՝

6.2.1. Վարձատուն խոչընդոտներ է ստեղծել Օբյեկտը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար:

*7. Հատուկ պայմաններ*

7.1. Պայմանագրի գործողությունը կարող է դադարել կողմերի համաձայնությամբ՝ նախապես երեք ամիս առաջ տեղեկացնելով:

7.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները և լրացումները կողմերը քննարկում և ձևակերպում են լրացուցիչ համաձայնագրերով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են կազմում:

7.3. Կողմերի վավերապայմանների փոփոխման դեպքում նրանք պարտավոր են երկշաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել այդ մասին:

7.4. Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

7.5.Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

7.6. Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման 30 օրվա ընթացքում:

*8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| | |
|---|---|
| ՎԱՐՁԱՏՈՒ | ՎԱՐՁԱԿԱԼ |
| Հասմիկ Միհրանի Խաչատրյան | Ծառայության աշխատակազմի Արաբկիր սոցիալական ապահովության տարածքային բաժնի գլխավոր մասնագետ Հռիփսիմե Բզնունի |
| (անձնագրի սերիա AA 0646248,, տրված 028-ի կողմից 1996թ.) | (անձնագիր՝ AF0540830, տրված 18.06.2002թ. 028-ի կողմից) |
| -------------------------------- | -------------------------------- |

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՍՄԻԿ ՄԻՀՐԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ և <<ՀՀ ԱՍՀՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ>> ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՀԵՏ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-ԻՆ ԿՆՔՎԱԾ <<ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ>> ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

քաղաք Երևան, երկու հազար --------------------------------

Քաղաքացի Հասմիկ Խաչատրյանը (անձնագիր՝ AM 0570263, տրված 19.12.2011թ. 028-ի կողմից) և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության <<Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Կողմ-2), ի դեմս աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի, ով գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. դեկտեմբերի 27-ի N 1531-Ն որոշմամբ հաստատված Ծառայության կանոնադրության հիման վրա, ում անունից հանդես է գալիս Ծառայության աշխատակազմի Արթիկի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ Էլմիրա Յուզբաշյանը (անձնագիր՝ AK 0675735, տրված 13.12.2010թ. 028-ի կողմից) (այսուհետ՝ Կողմեր), որը գործում է երկու հազար տասներեք թվականի ---------ին տրված N ---------- լիազորագրի հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով 2009թ. ապրիլի 8-ին երկուստեք կնքված <<Ոչ բնակելի տարածքի վարձակալության>> պայմանագիրը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

### 1. Համաձայնագրի առարկան

1. Կողմերը որոշել են 2009թ. ապրիլի 8-ին երկուստեք կնքված <<Ոչ բնակելի տարածքի վարձակալության>> պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) Պայմանագրի 1.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<1.2. Սույն պայմանագրը գործում է մինչև երկու հազար տասնյոթ թվականի դեկտեմբերի քսանհինգը ներառյալ: Երկու հազար տասնհինգ, երկու հազար տասնվեց, երկու հազար տասնյոթ թվականների համար սույն պայմանագիրը կգործի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որից հետո կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

2) Պայմանագիրը լրացնել նոր 1.5.-րդ կետով, հետևյալ բովանդակությամբ՝

<<1.5. Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի ապահովման ու արդյունավետության բարձրացման նպատակով՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցները, ինչպես նաև նոր ստեղծվող միասնական ընդունարանները, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում և շինություններում տեղակայելուն ուղղված միջոցառումների արդյունքում՝ <<Ոչ բնակելի տարածքի վարձակալության>> պայմանագրով վարձակության հանձնված տարածքում աշխատանքային գործունեություն իրականացնող Ծառայության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ տարածք տեղակայման դեպքում, պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման:

3) Պայմանագրի 3.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<3.1. Օբյեկտի ամսական վարձավճարի չափը կազմում է 220.000 (երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

4) Պայմանագրի 3.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<3.2. Նշված գումարը Վարձակալը Վարձատուին է տրամադրում ամսական կտրվածքով՝ մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը, իսկ դեկտեմբեր ամսվա համար, մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5)Ուժը կորցրած ճանաչել պայմանագրի 3.2.1. կետը:

6) Պայմանագրի 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝

<<4.Կողմերի պատասխանատվությունը՝

<<4.1. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0,5 %-ի (զրո ամբողջ հինգ տոկոսի) չափով:

<<4.2. Սույն պայմանագրով նախատեսված Օբյեկտի հանձնման ժամկետը խախտելու դեպքում Վարձատուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05%-ի (զրո ամբողջ և զրո հինգ տոկոսի) չափով:

<<4.3. Սույն պայմանագրով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Վարձատուին վճարման ենթակա գումարներից:

<<4.4. Վարձակալի կողմից սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Վարձակալի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի (զրո ամբողջ և զրո հինգ տոկոսի) չափով:

<<4.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
<<4.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում պատշաճ վավերացման պահից:
2.2. Սույն համաձայնագիրը համարվում է Կողմերի միջև երկու հազար տաս թվականի հունվարի քսանյոթին կնքված Պայմանագրի անբաժանելի մասը:
2.3. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 4 (չորս) օրինակից:
2.4. Սույն համաձայնագրի և Պայմանագրի դրույթների միջև հակասությունների դեպքում կիրառվում է սույն համաձայնագրով սահմանված դրույթը:

## 3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն Կողմերի համաձայնությամբ:
3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է ՀՀ գործող օրենսդրությամբ:
3.4. Սույն համաձայնագրի, ինչպես նաև Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 4. Կողմերի վավերապայմանները

| Կողմ-1 | Կողմ-2 |
|---|---|
| Քաղաքացի Համիկ Խաչատրյան<br><br>(անձնագիր՝AM 0570263, տրված 19.12.2011թ. 028-ի կողմից) | Ծառայության աշխատակազմի Արթիկի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ Էլմիրա Յուզբաշյան<br><br>(անձնագիր՝ AK 0675735, տրված 13.12.2010թ. 028-ի կողմից) |

«09.12.2013» թվականին սույն համաձայնագիրը վավերացվել է

իմ՝ ______________ Նոտար ______________

Նոտարական տարածքի անվանումը ա. ի. ա. լրիվ

կողմից:

Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը և իրավունակությունը ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում 3293 ով

Գանձված է պետական տուրք 5000

2000

Զինանշանի պատկերով կնիք

Նոտար ______________

ստորագրությունը

**Նոտարական ակտի կոդ:** 699-20171119-117-1956181
**Նոտարական ակտի գաղտնագիր:** 6E70P1

# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր
(Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին)

երկու հազար տասնյոթ թվականի նոյեմբերի քսանմեկ 21/11/2017
քաղաք Արթիկ, Շիրակի մարզ, Հայաստանի Հանրապետություն

**ՀԱՍՄԻԿ ՄԻՀՐԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ**, ծնված՝ 01/04/1932թ-ին, ՀԾՀ՝ 5104320286, անձնագիր՝ AM0570263, տրված՝ 028-ի կողմից, 19/12/2011թ-ին, հաշվառված՝ ՇԻՐԱԿ, ԱՐԹԻԿ, ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ Փողոց, տուն 54/հիսունչորս/, այսուհետ «Կողմ-1», մի կողմից և Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և Սոցիալական Հարցերի Նախարարության Սոցիալական Ապահովության Պետական Ծառայությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի, որի անունից համաձայն ինը նոյեմբերի երկու հազար տասնյոթ թվականին տրված N ՄՄ/17808-17 լիազորագրի հանդես է գալիս **ԷԼՄԻՐԱ ՎԱՆՅԱՅԻ ՅՈՒՉԲԱՇՅԱՆԸ**, ծնված՝ 20/04/1974թ-ին, ՀԾՀ՝ 7004740102, անձնագիր՝ AK0675735, տրված՝ 028-ի կողմից, 13/12/2010թ-ին, բնակության հասցե՝ ՇԻՐԱԿ, ԱՐԹԻԿ, Պ. ՍԵՎԱԿԻ Փ., 14 Տ , այսուհետ «Կողմ-2», մյուս կողմից, միասին այսուհետ՝ ԿՈՂՄԵՐ, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.
1.Կողմ-1-ի և Կողմ-2-ի միջև «Արթիկ» նոտարական տարածքի նոտարական գրասենյակում 08.04.2009թ. (երկու հազար ինը թվականի ապրիլի ութին) վավերացված, ըստ սեղանամատյանի № 733 Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում կողմերը կատարում են հետևյալ փոփոխությունները.
2.Պայմանագրի 1.2 և 3.1 կետերը շարադրել հետևյալ կերպ.
<<1.2.Սույն պայմանագիրը գործում է մինչև 25/12/2018/քսանհինգը դեկտեմբեր երկու հազար տասնութ/ թվականը ժամկետով:
3.1.Օբյեկտի ամսական վարձավճարը կազմում է 200000 /երկու հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ>>:
3.Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում պատշաճ վավերացման և պետական գրանցման պահից:
4.Սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում 30 (երեսուն) աշխատանքային օրվա ժամկետում:
5.Սույն համաձայնագիրը համարվում է «Արթիկ» նոտարական տարածքի նոտարական գրասենյակում 08.04.2009թ. (երկու հազար ինը թվականի ապրիլի ութին) վավերացված, ըստ սեղանամատյանի № 733 համարով գրանցված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի անբաժանելի մասը:
6.Սույն համաձայնագրի և Պայմանագրի դրույթների միջև հակասությունների դեպքում կիրառվում է սույն համաձայնագրի սահմանված դրույթը:
7. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է ՀՀ գործող օրենսդրությամբ:
8. Սույն համաձայնագրի, ինչպես նաև Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռ չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
9. Սույն համաձայնագրի կնքման և ձևակերպման հետ ծախսերը կատարում է

Վարձակալը:
10.Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որից մեկ օրինակը պահվում է նոտարական գրասենյակի գործերում, իսկ մյուսները տրվում է Կողմերին առձեռն:
11.Համաձայնագիրը բարձրաձայն ընթերցվել է նոտարի կողմից և պարզաբանվել գործող օրենսդրության նորմերը:

ԿՈՂՄ-1

ԿՈՂՄ-2

երկու հազար տասնյոթ թվականի նոյեմբերի քսանմեկ
Սույն համաձայնագիրը վավերացված է իմ` Արթիկ նոտարական տարածքի նոտար Գագիկ Բզնունու կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները ստուգված են: Համաձայնագրից բխող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:

Գրանցված է սեղանամատյանում 3141

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար վեց հազար ՀՀ դրամ ` համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Գագիկ Բզնունի

**Նոտարական ակտի կոդ:** 699-20181023-117-3142959
**Նոտարական ակտի գաղտնագիր:** 1CRQOA

# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր
(Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին)

Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ քաղաք Արթիկ
երկու հազար տասնութ թվականի հոկտեմբերի քսանհինգ

Հայաստանի Հանրապետության քաղաքացի **ՀԱՄԻԿ ՄԻՀՐԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ**, ծնված՝ 01/04/1932թ-ին, ՀԾՀ՝ 5104320286, անձնագիր՝ AM0570263, տրված՝ 028-ի կողմից, 19/12/2011թ-ին, հաշվառված՝ ՇԻՐԱԿ, ԱՐԹԻԿ, ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ Փ., 54 Տ, այսուհետ՝ «Կողմ-1», մի կողմից և «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմին, հասցե՝ ԿԵՆՏՐՈՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ. / 13, գրանցման համար՝ 286.184.1024769, ՀՎՀՀ՝ 02505511, ի դեմս Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ **ՎԱՆԻԿ ՄԱՔՍԻՄԻ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ**, ծնված՝ 01/01/1972, ՀԾՀ՝ 1101720018, անձնագիր՝ AM0474640, տրված՝ 019-ի կողմից 18/10/2011թ-ին, հաշվարված՝ ԱԲՈՎՅԱՆ 2 ՄԿՐԾ. / 8 / 99, որի անունից համաձայն 27/09/2018(քսանյոթը սեպտեմբերի երկու հազար տասնութ) թվականին տրված N ՎԲ/ՀռՄ/23678-18 լիազորագրի հանդես է գալիս **ՍՈՖՅԱ ՍՈՒՐԵՆԻ ՔՈՉԱՐՅԱՆԸ**, ծնված՝ 03/02/1956թ-ին, ՀԾՀ՝ 5302560062, նույնականացման քարտ՝ 005572714, տրված՝ 016-ի կողմից, 23/05/2014թ-ին, հաշվառված՝ ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ Փ., 20 Շ, 4ԲՆ, այսուհետ «Կողմ-2», մյուս կողմից, միասին այսուհետ՝ ԿՈՂՄԵՐ, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Կողմ-1-ի և Կողմ-2-ի միջև «Արթիկ» նոտարական տարածքի նոտարական գրասենյակում 08.04.2009թ. (երկու հազար ինը թվականի ապրիլի ութին) վավերացված և սեղանամատյանի 733 համարով գրանցված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում կողմերը կատարում են հետևյալ փոփոխությունները.

2.Պայմանագրի **1.2** կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ Սույն պայմանագիրը գործում է մինչև 25/12/2019/քսանհինգը դեկտեմբեր երկու հազար տասնինըն/ թվականը ժամկետով:

3.Համաձայնագրով չսահմանված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի պայմանները մնում են անփոփոխ:

4.Սույն համաձայնագիրը համարվում է «Արթիկ» նոտարական տարածքի նոտարական գրասենյակում 08.04.2009թ. (երկու հազար ինը թվականի ապրիլի ութին) վավերացված և սեղանամատյանի 733 համարով գրանցված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի անբաժանելի մասը:

5.Սույն համաձայնագրի և Պայմանագրի դրույթների միջև հակասությունների դեպքում կիրառվում է սույն համաձայնագրի սահմանված դրույթը:

6.Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են վարձակալության պայմանագրով սահմանված կարգով:

7.Սույն համաձայնագրի կնքման և ձևակերպման հետ ծախսերը կատարում է ՀԱՄԻԿ ՄԻՀՐԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ:

8.Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որից մեկ օրինակը պահվում է նոտարական գրասենյակի գործերում, իսկ մյուսները տրվում է Կողմերին առձեռն:

9.Համաձայնագիրը բարձրաձայն ընթերցվել է նոտարի կողմից և պարզաբանվել գործող օրենսդրության նորմերը:

ՀԱՄԻԿ ՄԻՀՐԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

1. Համիկ Խաչատրյան Համիկ Միհրանի

«Կողմ-2»-ի լիազորված անձ՝ ՍՈՖՅԱ ՍՈՒՐԵՆԻ ՔՈՉԱՐՅԱՆ

1. Սոֆյա Սուրենի Քոչարյան

25/10/2018 երկու հազար տասնութ թվականի հոկտեմբերի քսանհինգին, սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ <<ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ>> նոտարական տարածքի նոտար ԳԱԳԻԿ ՍԱՄՎԵԼԻ ԲՋՆՈՒՆՈՒՍ կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի

ինքնությունը, գործունակությունը ստուգված են:

Գրանցված է գրանցամատյան թիվ 2970-ով

Գանձված է պետական տուրքը երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Գագիկ Սամվելի Բզնունի

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ ՆՈՏԱՐ ԲԶՆՈՒՆԻ ԳԱԳԻԿ
RA SHIRAK MARZ NOTARIAL TERRITORY NOTARY BZNUNI GAGIK
89656742

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԿԱՅԱԿԱՆ
## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «8» Նոյեմբերի 2018 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

### 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»

### 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Շիրակ, համայնք Արթիկ ք. Ազատության հրապարակ 1/2 տարածք

### 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի վարձակալության պայմանագիր՝ վավերացված 08.04.2009թ-ին սեղանամատյան թիվ 733, համաձայնագրեր՝ վավերացված 21.11.2017թ.-ին սեղանամատյան թիվ 3141, 25.10.2018թ. գրանցամատյան թիվ 2970

### 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/հ | Կադաստրային ծածկագիրը | Տեսակը | Մակերեսի չափը | Գրանցված իրավունքի տեսակը |
|---|---|---|---|---|
| **1** | **08-002-0140-0028-001** | **Քաղաքապետարանի տարածք** | **145.7 ք.մ.** | **ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ** |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

*Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ*

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Լուսինե Վարդանյան

զբաղեցրած պաշտոնը՝ Շիրակի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

Կ.Տ.

# ՊԵՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ
# ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

**Քաղաքացի**

| | |
|---|---|
| անունը | ՀԱՍՄԻԿ |
| հայրանունը | ՄԻՀՐԱՆ |
| ազգանունը | ԽԱՉԱՏՐՅԱՆ |
| ծննդյան ժամանակը | 1932 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-ԻՆ |
| ծննդյան վայրը (երկիր, մարզ, բնակավայր) | ՀՀ, ՇԻՐԱԿ, ԱՐԹԻԿ |
| ազգությունը | ՀԱՅ |
| քաղաքացիությունը | ՀՀ |

**մահացել է**

| | |
|---|---|
| մահվան ժամանակը | 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ |
| մահվան պատճառը | ԸՍՏ ՀՄԴ-10 ԴԱՍԱԿԱՐԳՉԻ I25 |
| մահվան վայրը (երկիր, մարզ, բնակավայր) | ՀՀ, ՇԻՐԱԿ, ԱՐԹԻԿ |

**որի մասին ՀՀ քաղաքացիական կացության ակտերի գրանցման միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարվել է գրանցում**

| | |
|---|---|
| գրանցման ժամանակը | 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ |
| գրանցման համարը | 879/332/2019 |
| գրանցող մարմինը | ԱՐԹԻԿ ՔԿԱԳ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ |

**Վկայականը տրվել է**

| | |
|---|---|
| ժամանակը | 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ |

ԱՐԹԻԿ ՔԿԱԳ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

[illegible] ԳԱՍՊԱՐՅԱՆ

[illegible] www.e-verify.am [illegible] CR9U-EIFN-P8IX-3BII [illegible]

ԲԱ178692

**Նոտարական ակտի կոդ:** 699-20191217-117-4371643
**Նոտարական ակտի գաղտնագիր:** FK7364

# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

(Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին)

Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ քաղաք Արթիկ
երկու հազար տասնինը թվականի դեկտեմբերի տասնյոթ

Հայաստանի Հանրապետության քաղաքացի **ԱՐՍԵՆ ԱԼԵՔՍԱՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ**, ծնված՝ 18/05/1967թ-ին, ՀԾՀ՝ 2805670108, նույնականացման քարտ՝ 000323089, տրված՝ 028-ի կողմից, 12/06/2013թ-ին, հաշվառված՝ ՇԻՐԱԿ, ԱՐԹԻԿ, ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ Փ., 54 Տ, այսուհետ՝ «Կողմ-1», մի կողմից և «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմին, հասցե՝ ԿԵՆՏՐՈՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ. / 13, գրանցման համար՝ 286.184.1024769, ՀՎՀՀ՝ 02505511, ի դեմս Գլխավոր քարտուղար՝ **ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ**, որի անունից համաձայն 16.12.2019(տասնվեցը դեկտեմբերի երկու հազար տասնինը) թվականին տրված N 02/12-1/29216-2019 լիազորագրի հանդես է գալիս **ԷԼՄԻՐԱ ՎԱՆՅԱՅԻ ՅՈՒԶԲԱՇՅԱՆԸ**, ծնված՝ 20/04/1974թ-ին, ՀԾՀ՝ 7004740102, անձնագիր՝ AK0675735, տրված՝ 028-ի կողմից, 13/12/2010թ-ին, հաշվառված՝ ՇԻՐԱԿ, ԱՐԹԻԿ, Պ. ՍԵՎԱԿԻ Փ., 14 Տ, այսուհետ «Կողմ-2», մյուս կողմից, միասին այսուհետ՝ ԿՈՂՄԵՐ, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Կողմ-1-ի և Կողմ-2-ի միջև «Արթիկ» նոտարական տարածքի նոտարական գրասենյակում 08.04.2009(ութը ապրիլի երկու հազար ինը) թվականին վավերացված և սեղանամատյանի 733 համարով գրանցված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում կողմերը կատարում են հետևյալ փոփոխությունները.

2.Պայմանագրի **1.2** կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ Սույն պայմանագիրը գործում է մինչև 25.12.2021/քսանհինգը դեկտեմբեր երկու հազար քսանմեկ/ թվականը ժամկետով:

3.Համաձայնագրով չսահմանված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի մյուս պայմանները մնում են անփոփոխ:

4.Սույն համաձայնագիրը համարվում է «Արթիկ» նոտարական տարածքի նոտարական գրասենյակում 08.04.2009(ութը ապրիլի երկու հազար ինը) թվականին վավերացված և սեղանամատյանի 733 համարով գրանցված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի անբաժանելի մասը:

5.Սույն համաձայնագրի և Պայմանագրի դրույթների միջև հակասությունների դեպքում կիրառվում է սույն համաձայնագրի սահմանված դրույթը:

6.Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են վարձակալության պայմանագրով սահմանված կարգով:

7.Սույն համաձայնագրի կնքման և ձևակերպման հետ ծախսերը կատարում է ԱՐՍԵՆ ԱԼԵՔՍԱՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ:

8.Պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի/Շիրակի մարզ, համայնք Արթիկ ք., Ազատության հրապարակ թիվ 1/2(մեկ կոտորակ երկու)տարածք/ նկատմամբ սահմանափակումներ գրանցված չեն, համաձայն Անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ թիվ ՄՏ-09122019-08-0242 Միասնական Տեղեկանքով, տրված՝ Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանման կողմից, որի տվյալները լրացված են 09.12.2019(ինը դեկտեմբերի երկու հազար տասնինը)թվականի դրությամբ: Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ-Շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ /հատկացված/ 0.0409 հա մակերեսով հողամասի և շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նկատմամբ սեփականատիրոջ բաժնեմասը կազմում է 145/613-րդ մաս: Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է ՀՀ 04.10.2005թ. թիվ 199-Ն օրենքի 23-րդ /ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ/ հոդվածի պահանջների համաձայն պայմանով՝ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը և ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում գտնվելու/չգտնվելու/ վերաբերյալ տեղեկանքը ներկայացնելու դեպքում:

9.Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որից մեկ օրինակը պահվում է նոտարական գրասենյակի գործերում, իսկ մյուսները տրվում է Կողմերին առձեռն:

10.Նոտարի ներկայությամբ Համաձայնագիրը ստորագրող Կողմերը հայտարարում են, որ իրենք գործունակ են, ամբողջովին գիտակցում են և հասկանում Համաձայնագրով նախատեսված բոլոր կետերի իմաստը և նշանակությունը, ինչպես նաև հայտարարում են, որ Համաձայնագիրը ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնտու պայմաններով:
11.Համաձայնագիրը բարձրաձայն ընթերցվել է Նոտարի կողմից և պարզաբանվել գործող օրենսդրության նորմերը:
12.Համաձայնագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է Նոտարական գրասենյակում պահվող օրինակին:

«Կողմ-1»՝ ԱՐՍԵՆ ԱԼԵՔՍԱՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

1.____________________________________

«Կողմ-2»-ի լիազորված անձ՝ ԷԼՄԻՐԱ ՎԱՆՅԱՅԻ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

1____________________________________

երկու հազար տասնինը թվականի դեկտեմբերի տասնյոթ 17/12/2019, սույն համաձայնագիրը վավերացված է իմ Հայաստանի Հանրապետության <<ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ>> նոտարական տարածքի նոտար՝ ԳԱԳԻԿ ՍԱՄՎԵԼԻ ԲԶՆՈՒՆՈՒ կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Համաձայնագիրը ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը և նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:

Գրանցված է գրանցամատյան թիվ 4214 ----------------ով

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Գագիկ Սամվելի Բզնունի

Նոտարական ակտի կոդ: 701-20191120-04-4317156
Նոտարական ակտի գաղտնագիր: [illegible]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

<<ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ>> ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ
ՏԱԹԵՎԻԿ ԼՅՈՎԱՅԻ ՏԱԾՅԱՆ

**Հասցե` ՀՀ, Շիրակի մարզ, ք. Մարալիկ,**
**Մաղաքյան 1, 3-րդ հարկ, .**
**Հեռախոս` (0242) 2-17-56**
**Էլ.հասցե** tatev83[illegible]mail.ru

Ըստ կտակի ժառանգության իրավունքի
Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր

Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Ք.ՄԱՐԱԼԻԿ
Երկու հազար տասնինը թվականի նոյեմբերի քսանմեկին 21/11/2019թ.

Ես` << «Շիրակի մարզ» նոտարական տարածքի նոտար ՏԱԹԵՎԻԿ ԼՅՈՎԱՅԻ ՏԱԾՅԱՆՍ, հաստատում եմ, որ քաղ. **ՀԱՍՄԻԿ ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ** կողմից երկու հազար [illegible] թվականի հուլիսի տասնինգին «Շիրակի մարզ» նոտարական տարածքում Գագիկ Սամվելի Բզնունու կողմից հաստատված և գրանցամատյանում N 2362-ով գրանցված կտակի համաձայն, քաղ. **ՀԱՍՄԻԿ ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ** , մահացած երկու հազար տասնինը թվականի հոկտեմբերի տասնութին, կտակում ցույց տրված գույքի ժառանգ է հանդիսանում **ԱՐՍԵՆ ԱԼԵՔՍԱՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ**, ծնված` 18/05/1967թ-ին, ՀԾՀ` 2805670108, նույնականացման քարտ 000323089, տրված` 028-ի կողմից, 17/06/2013թ-ին, հաշվառված` ՇԻՐԱԿ, ԱՐԹԻԿ, ՍԱՅԱԹ ՆՈՎԱՅԻ Փ., 54 Տ

Ժառանգական գույքը, որի համար տրված է սույն վկայագիրը, բաղկացած է

1) Շիրակի մարզի, Արթիկ քաղաքի Սայաթ Նովա փողոցի, թիվ 54 հասցեում գտնվող 172.36 /մեկ հարյուր յոթանասուներկու ամբողջ [illegible]/ քմ բնակելի տան, 29.7[illegible] /[illegible]/ քմ բնակելի տան, 4.7 [illegible] /[illegible]/ քմ պարիսպի և 0.0695 / /զրո ամբողջ զրո [illegible] հազար [illegible]/ հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի 3/4 բաժնից, (կադաստրային համար 08-002-0152-0058)` ըստ << կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի [illegible] կոմիտեի Աշխատակազմի Շիրակ մարզային ստորաբաժանման կողմից 24.05.201[illegible] [illegible] թիվ 24052013-08-0001 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի հիման վրա

2) Շիրակի մարզի Արթիկ քաղաքի, Ազա[illegible]յան փողոցի թիվ 1/2 հասցեում գտնվող 145.7 (մեկ հարյուր քառասունհինգ ամբողջ յոթ) հասարակական նշանակության անշարժ գույքը և 0.0409 /զրո ամբողջ զրո չորս հարյուր ինը/ հա քաղաքաշինության հարամայրին մասնաշենքի կառուցման և սպասարկման համար ընդհանուր բաժնեմասային սեփականության 145 [illegible] հողամասը` ըստ << Կառավարությանն Առընթեր Անշարժ Գույքի Կադաստրի Պետական Կոմիտեի Արթիկի տարածքային ստորաբաժանման կողմից 18.03.2009թ. [illegible] սեփականության իրավունքի վկայականի

Սույն վկայագրից ծագող իրավունքները [illegible]
իրավունքների գրանցման [illegible]

Գրանցված է գրանցամատյանում 1962

**Ժառանգական գործի համարը 227 / 2019 թ/**

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասնհինգ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Տաթևիկ Լյովայի Տաշչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 23 դեկտեմբերի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Շիրակ. համայնք Արթիկ ք. Ազատության հրապարակ 1/2 տարածք

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի վարձակալության պայմանագիր՝ վավերացված 08.04.2009թ-ին սեղանամատյան թիվ 733. համաձայնագրեր՝ վավերացված 21.11.2017թ.-ին սեղանամատյան թիվ 3141. վավերացված 25.10.2018թ. գրանցամատյան թիվ 2970. վավերացված 17.12.2019թ. գրանցամատյան թիվ 4214

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝
Մակերեսի չափը (հա)՝
Նպատակային նշանակությունը՝
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝
Գրանցված իրավունքի տեսակը՝

ՎԿԱՅԱԿԱՆ N 23122019-08-0026, գաղտնաբառ՝ 6SZNBEQF2YFW

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| 1 | 08-002-0140-0028-001 | Տարածք | 145.7 քմ | ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

## Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Ժամկետը՝ մինչև 25.12.2021 թվականը:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Ռոման Հարությունյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 23122019-08-0026, գաղտնաբառ՝ 6SZNBEQF2YFW

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Կադաստրի կոմիտե

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ԱՐԹԻԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ

«05» 06 2012թ. N 321

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Գեւորգյան**

Տեղեկացնում եմ, որ Սոցիալական ապահովության ծառայության և ՀՀ քաղաքացի Արսեն Ալեքսանի Աբրահամյանի հետ 2009 թվականի ապրիլի 8-ին կնքված «Ոչ բնակելի տարածքի վարձակալության» պայմանագրով սահմանված գումարի փոխանցման համար կատարվել է հաշվեհամարի փոփոխություն:

Խնդրում եմ այսուհետ գումարը փոխանցել Ակբա-Կրեդիտ Ագրիկոլբանկ ՓԲԸ-ում բացված 220352645729000 հաշվեհամարին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա.ՍՈՂՈՅԱՆ

Կատարող՝ Արթիկի տարածքային բաժին
Հեռ:(+374) 060-654-099/772

ք. Արթիկ 3001, Ազատության հրապարակ 1/2, հեռ.՝ (374 60) 65 40 99 / 771
info@ssa.am , www.ssa.am

**Նոտարական ակտի կոդ:** 699-20211223-117-5606908
**Նոտարական ակտի գաղտնագիր:** FXBLMK

# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր
(Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին)

Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ քաղաք Արթիկ
երկու հազար քսանմեկ թվականի դեկտեմբերի քսաներեք

Հայաստանի Հանրապետության քաղաքացի **ԱՐՍԵՆ ԱԼԵՔՍԱՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ**, ծնված՝ 18/05/1967թ-ին, ՀԾՀ՝ 2805670108, անձնագիր՝ 012276176, տրված՝ 028-ի կողմից, 14/04/2021թ-ին, բնակության հասցե՝ ՇԻՐԱԿ, ԱՐԹԻԿ, ԱՐԹԻԿ, ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ Փ., 54 Տ, այսուհետ՝ «Կողմ-1», մի կողմից և «ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմին, հասցե՝ Հայաստան, ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ., 13, 0010, գրանցման համար՝ 286.184.1024769, ՀՎՀՀ՝ 02505511, այսուհետ՝ <<Վարձակալ>>, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ **ԱՇՈՏ ԱՐՇԱԿՅԱՆԻ**, որի անունից համաձայն 03.12.2021(երեքը դեկտեմբերի երկու հազար քսանմեկ) թվականին տրված N 02/12-1/53594-21 լիազորագրի հանդես է գալիս լիազորված անձ՝ **ԱՐԹՈՒՐ ՍԱՇԱՅԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ**, ծնված՝ 08/06/1977թ-ին, ՀԾՀ՝ 1814770100, նույնականացման քարտ՝ 001252139, տրված՝ 016-ի կողմից, 09/04/2014թ-ին, հաշվառված՝ ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԱՆԻ ԹՂ. 5 Փ., 6 Շ, 15ԲՆ, այսուհետ «Կողմ-2», մյուս կողմից, միասին այսուհետ՝ ԿՈՂՄԵՐ, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.
1.Կողմ-1-ի և Կողմ-2-ի միջև «Արթիկ» նոտարական տարածքի նոտարական գրասենյակում 08.04.2009(ութը ապրիլի երկու հազար ինը) թվականին վավերացված և սեղանամատյանի 733 համարով գրանցված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում կողմերը կատարում են հետևյալ փոփոխությունները.
2.Պայմանագրի **1.2** կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ Սույն պայմանագիրը գործում է մինչև 25.12.2022/քսանհինգը դեկտեմբեր երկու հազար քսաներկու/ թվականը ժամկետով:
3.Համաձայնագրով չսահմանված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի մյուս պայմանները մնում են անփոփոխ:
4.Սույն համաձայնագիրը համարվում է «Արթիկ» նոտարական տարածքի նոտարական գրասենյակում 08.04.2009(ութը ապրիլի երկու հազար ինը) թվականին վավերացված և սեղանամատյանի 733 համարով գրանցված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի անբաժանելի մասը:
5.Սույն համաձայնագրի և Պայմանագրի դրույթների միջև հակասությունների դեպքում կիրառվում է սույն համաձայնագրի սահմանված դրույթը:
6.Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են վարձակալության պայմանագրով սահմանված կարգով:
7.Սույն համաձայնագրի կնքման և ձևակերպման հետ ծախսերը կատարում է ԱՐՍԵՆ ԱԼԵՔՍԱՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ:
8.Պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի/Շիրակի մարզ, համայնք Արթիկ ք., Ազատության հրապարակ թիվ 1/2(մեկ կոտորակ երկու) տարածք/ նկատմամբ սահմանափակումներ գրանցված չեն, համաձայն Անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ թիվ ՄՏ-21122021-08-0277 Միասնական Տեղեկանքով, տրված՝ Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանումից, որի տվյալները լրացված են 21.12.2021(քսանմեկը դեկտեմբերի երկու հազար քսանմեկ) թվականի դրությամբ: Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ-Շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ /հատկացված/ 0.0409 հա մակերեսով հողամասի և շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նկատմամբ սեփականատիրոջ բաժնեմասը կազմում է 145/613-րդ մաս: Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է ՀՀ 04.10.2005թ. թիվ 199-Ն օրենքի 23 -րդ /ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ/ հոդվածի պահանջների համաձայն պայմանով՝ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը և ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չգտնվելու վերաբերյալ տեղեկանքը ներկայացնելու դեպքում:
9.Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որից մեկ օրինակը պահվում է նոտարական գրասենյակի

գործերում, իսկ մյուսները տրվում է Կողմերին առձեռն:
10.Նոտարի ներկայությամբ Համաձայնագիրը ստորագրող Կողմերը հայտարարում են, որ իրենք գործունակ են, ամբողջովին գիտակցում են և հասկանում Համաձայնագրով նախատեսված բոլոր կետերի իմաստը և նշանակությունը, ինչպես նաև հայտարարում են, որ Համաձայնագիրը ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնտու պայմաններով:
11.Համաձայնագիրը բարձրաձայն ընթերցվել է նոտարի կողմից և պարզաբանվել գործող օրենսդրության նորմերը:
12.Համաձայնագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարական գրասենյակում պահվող օրինակին:

«Կողմ-1»՝ ԱՐՍԵՆ ԱԼԵՔՍԱՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

1. Աբրահամյան Արսեն Ալեքսանի

«Կողմ-2»-ի լիազորված անձ՝ ԱՐԹՈՒՐ ՍԱՇԱՅԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

1 Մանուկյան Արթուր Սաշայի

երկու հազար քսանմեկ թվականի դեկտեմբերի քսաներեք 23/12/2021, սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության <<ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ>> նոտարական տարածքի նոտար՝ ԳԱԳԻԿ ՍԱՄՎԵԼԻ ԲՋՆՈՒՆՈՒՍ կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Համաձայնագիրը ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը և նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:

Գրանցված է գրանցամատյան թիվ 4821-ով

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Գագիկ Սամվելի Բջնունի

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ ՆՈՏԱՐ ԳԱԳԻԿ ՍԱՄՎԵԼԻ ԲՋՆՈՒՆԻ
RA "SHIRAK MARZ" NOTARIAL TERRITORY NOTARY BJNUNI GAGIK
*89656742*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 28 դեկտեմբերի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Շիրակ, համայնք Արթիկ ք. Ազատության հրապարակ 1/2 տարածք

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի վարձակալության պայմանագիր՝ վավերացված 08.04.2009թ-ին սեղանամատյան թիվ 733, համաձայնագրեր՝ 21/11/2017թ. սեղանամատյան թիվ 3141, 25/10/2018թ. գրանցամատյան թիվ 2970, համաձայնագիր՝ 17/12/2019թ. գրանցամատյան թիվ 4214, համաձայնագիր՝ 23/12/2021թ. գրանցամատյան թիվ 4821

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝
Մակերեսի չափը (հա)՝
Նպատակային նշանակությունը՝
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝
Գրանցված իրավունքի տեսակը՝

ՎԿԱՅԱԿԱՆ N 28122021-08-0046, գաղտնաբառ՝ GBK638KJEESH

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական
2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| 1 | 08-002-0140-0028-001 | Տարածք | 145.7 քմ | ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

## Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Ժամկետը՝ մինչև 25/12/2022 թվականը:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Կարեն Խաչատրյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Շիրակի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

**ՎԿԱՅԱԿԱՆ N 28122021-08-0046, գաղտնաբառ՝ GBK638KJEESH**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Կադաստրի կոմիտե

**Նոտարական ակտի կոդ:** 699-20221216-117-6534537
**Նոտարական ակտի գաղտնագիր:** XAE4JP

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին)

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Արթիկ
երկու հազար քսաներկու թվականի դեկտեմբերի տասնվեց

Հայաստանի Հանրապետության քաղաքացի **ԱՐՍԵՆ ԱԼԵՔՍԱՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ**, ծնված՝ 18/05/1967թ-ին, ՀԾՀ՝ 2805670108, նույնականացման քարտ՝ 012276176, տրված՝ 028-ի կողմից, 14/04/2021թ-ին, բնակության հասցե՝ ՇԻՐԱԿ, ԱՐԹԻԿ, ԱՐԹԻԿ, ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ Փ., 54 Տ, այսուհետ՝ «Կողմ-1», մի կողմից և «ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմինը, հասցե՝ Հայաստան, ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ., 13, 0010, գրանցման համար՝ 286.184.1024769, ՀՎՀՀ՝ 02505511, ի դեմս գլխավոր քարտուղար՝ ԱԳՆԵՍԱ ՌԱՖԻԿԻ ԱՂԱԲԱԲՅԱՆԻ, ծնված՝ 30/04/1977թ-ին, ՀԾՀ՝ 8004770010, նույնականացման քարտ՝ 009448887, տրված՝ 011-ի կողմից, 26/07/2018թ-ին, այսուհետ «Կողմ-2», որի անունից համաձայն երկու հազար քսաներկու թվականի դեկտեմբերի ութին տրված թիվ 02/12-1/66856-22 լիազորագրի, հանդես է գալիս լիազորված անձ՝ **ՏԱՐՈՆ ՀԵՆՐԻԿԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԸ**, ծնված՝ 26/02/1980թ-ին, ՀԾՀ՝ 3602800415, նույնականացման քարտ՝ 010565166, տրված՝ 028-ի կողմից, 30/08/2018թ-ին, բնակության հասցե՝ ՇԻՐԱԿ, ԱՐԹԻԿ, ԱՐԹԻԿ, ՏՈՆԱԿԱՆՅԱՆ Փ., 38, Շ, 37ԲՆ, մյուս կողմից, միասին այսուհետ՝ ԿՈՂՄԵՐ, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.
1.Կողմ-1-ի և Կողմ-2-ի միջև «Արթիկ» նոտարական տարածքի նոտարական գրասենյակում 08.04.2009(ութը ապրիլի երկու հազար ինը) թվականին վավերացված և սեղանամատյանի 733 համարով գրանցված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում կողմերը կատարում են հետևյալ փոփոխությունները.
2.Պայմանագրի **1.2** կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ պայմանագրի գործողության ժամկետ սահմանել մինչև 25.12.2023(երկու հազար քսաներեք թվականի դեկտեմբերի քսանհինգը):
3.Համաձայնագրով չսահմանված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի մյուս պայմանները մնում են անփոփոխ:
4.Սույն համաձայնագիրը համարվում է «Արթիկ» նոտարական տարածքի նոտարական գրասենյակում 08.04.2009(ութը ապրիլի երկու հազար ինը) թվականին վավերացված և սեղանամատյանի 733 համարով գրանցված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի անբաժանելի մասը:
5.Սույն համաձայնագրի և Պայմանագրի դրույթների միջև հակասությունների դեպքում կիրառվում է սույն համաձայնագրի սահմանված դրույթը:
6.Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են վարձակալության պայմանագրով սահմանված կարգով:
7.Սույն համաձայնագրի կնքման և ձևակերպման հետ ծախսերը կատարում է ԱՐՍԵՆ ԱԼԵՔՍԱՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ:
8.Պայմանագրի 1.1 կետում նշված՝ ՀՀ, Շիրակի մարզ, համայնք Արթիկ, Արթիկ քաղաք, Ազատության հրապարակ թիվ 1/2(մեկ կոտորակ երկու) տարածք հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ սահմանափակումներ գրանցված չեն, համաձայն Անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ թիվ ՄՏ-13122022-08-0430 միասնական տեղեկանքի, տրված՝ Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանումից, որի տվյալները լրացված են 13.12.2022(տասներեքը դեկտեմբերի երկու հազար քսաներկու) թվականի ժամը 11:40-ի դրությամբ: Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ՝ Շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ /հատկացված/ 0.0409 հա մակերեսով հողամասի և շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նկատմամբ սեփականատիրոջ բաժնեմասը կազմում է 145/613-րդ մաս: Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է ՀՀ 04.10.2005թ. թիվ 199-Ն օրենքի 23 -րդ /ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ/ հոդվածի պահանջների համաձայն պայմանով՝ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը և ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում գտնվելու/չգտնվելու/ վերաբերյալ տեղեկանքը ներկայացնելու դեպքում: «Անկանխիկ

գործառնությունների մասին» օրենքի 4-5-րդ և 7-րդ հոդվածների համաձայն՝ գույքի օտարման գործարքների դիմաց որոշակի սահմանաչափերը գերազանցող գումարն անկանխիկ չվճարելու դեպքում տվյալ գործարքներն առոչինչ են:
9.Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որից մեկ օրինակը պահվում է նոտարական գրասենյակի գործերում, իսկ մյուսները տրվում է Կողմերին առձեռն:
10.Նոտարի ներկայությամբ Համաձայնագիրը ստորագրող Կողմերը հայտարարում են, որ իրենք գործունակ են, ամբողջովին գիտակցում են և հասկանում Համաձայնագրով նախատեսված բոլոր կետերի իմաստը և նշանակությունը, ինչպես նաև հայտարարում են, որ Համաձայնագիրը ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնտու պայմաններով:
11.Համաձայնագիրը բարձրաձայն ընթերցվել է նոտարի կողմից և պարզաբանվել գործող օրենսդրության նորմերը:
12.Համաձայնագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարական գրասենյակում պահվող օրինակին:

«Կողմ-1»՝ ԱՐՍԵՆ ԱԼԵՔՍԱՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

1. ______________________________

«Կողմ-2»-ի լիազորված անձ՝ ՏԱՐՈՆ ՀԵՆՐԻԿԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

1______________________________

16/12/2022 երկու հազար քսաներկու թվականի դեկտեմբերի տասնվեցին, սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության <<ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ>> նոտարական տարածքի նոտար ԳԱԳԻԿ ՍԱՄՎԵԼԻ ԲՁՆՈՒՆՈՒՍ կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Համաձայնագիրը ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը և նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:

Գրանցված է գրանցամատյան թիվ ---4994---ով

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Գագիկ Սամվելի Բզնունի